# ԿՈՆԴԱԿ ՄԵՍՐՈՎԲԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ



Ս. Աստուածածին Հայոց ի Կամենից

Տէր Մեսրոպ կաթողիկոս ամենայն Հայոց. Զոր գրեմք յամենաւրհնեալ յականաւոր յաստուածապահ մեծ և գովելի մայրաքաղաքիդ, ի Լաւովդ և յԱշխատեմբրդ, ի Լուցկայն, և ի սահմանեալ վիճակ իւր, ի գեղ և ի վանօրայք ի միասին*. Որոց այդոցիկ առ հասարակ բնակչացդ՝ մեր ի Քրիստոս Աստուած հաւատացեալ սիրելի ըստ հոգւոյ որդոց. պատուական և որբասէր քահանայից, աստուածասէր և գովելի պարոնացդ և խաւճայնոյդ, հարկեոր և բարէպաշտ տանուտերացդ, իմաստուն և փառաւոր վաճառականացդ, քաղաքայնոցդ և ճանապարհորդացդ, ձեռնահրմուտ արվեստագիտացդ, աշխատասէր հողագործացդ. և ամենայն հայասեան և քրիստոսադաւան մերոց ժողովրդականացդ, մեծամեծացդ և փոքունցդ, արանցդ և կանանցդ, ծերոցդ և տղայոցդ, երիտասարդացդ՝ և կուսիցդ, և ամենայն չափու հասակի. Կարողութեամբն Աստուծոյ Հաւր, շնորհաւք Սուրբ Հոգւոյն, սիրովն Քրիստոսի. առաքեմք ողջոյն սիրոյ ի մէնջ, և աւրհնութիւն

* Ամենայն նօտրագիր բառերն ի բնագրին կարմրագեղով են գրուած, ինչպէս և կաթողիկոսին ձեռնագիրն։